

## ՀՀ-ՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔՆԵՐԸ

### Արման ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԵԿՏԱ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր՝ էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային բիզնես, բիզնեսի թվայնացման ռազմավարություն, բիզնեսի թվայնացման չափորոշիչներ

Բիզնեսի թվայնացումը արդի ժամանակաշրջանում ներմուծել է բիզնեսի թվային կամ էլեկտրոնային էկոհամարգ նոր հասկացությունը: Թվային էկոհամակարգի ձևավորումը օբյեկտիվ գործընթաց է անկախ բիզնեսի ցանկություններից կամ կամքից: Խնդիրը կայանում է նրանում, թե ինչքանով է բիզնեսը հարմարվում դրան և կարողանում օգուտներ քաղել թվային էկոհամակարգից, մասնավորապես՝ նոր արդյունավետ բիզնես գաղափարների առաջացման, պրոդուկտների և ծառայությունների ստեղծման և ներդրման առումով: Թվային էկոհամակարգի հայտանիշների հիմքում տնտեսավարող սուբյեկտի ներսում և սուբյեկտների միջև տեղեկատվության մշակման և փոխանցման որակական նոր հնարավորություններն են, որոնք արմատապես փոխում են բիզնեսի կոնֆիգուրացիան և արդյունավետությունը: Դա պայմանավորված է նաև նրանով, որ տնտեսական գործարքների մեծ մասին մասնավորապես ֆինանսական գործարքներին բնորոշ է այն, որ գործարքի իրական օբյեկտը հնարավոր է արտացոլել դրա մասին սպառաիչ տեղեկատվությամբ:

Թվային դարաշրջանի զարգացումը պայմանավորված է ՏՀՏ-ի աննախադեպ զարգացումներով, դրա համար պահաջվող սարքերի (համակարգիչներ, շարժական սարքեր և այլն) և ենթակառուցվածքների (հեռահաղորդակցության միջոցներ) հեղափոխական զարգացումներով: Մյուս կողմից այդ բաղադրիչների գործունակության հենքը ապահովում են կառավարման նոր հայեցակարգերն ու մոտեցումները: Այսպիսով, արդի տնտեսական հարաբերությունները հիմնված են գլոբալացման և ՏՀՏ-ի վրա: Բիզնեսի սուբյեկտները ակտիվորեն յուրացնելով ՏՀՏ հնարավորությունները միանում են բիզնես թվային էկոհամակարգին և այդ գործոնը դառնում է բիզնեսի կենսունակության ապահովման ու մրցունակության անհրաժեշտ պայման: Թվայնացման փորձագետ Դեն Ռեյմերի (Den Reymmer) մեկնաբանությամբ էլ-բիզնեսի միջավայրի մեջ յուրաքանչյուր կազմակերպություն հանդիսանում է թվային "բիզնես էկոհամակարգի" մասնիկ<sup>1</sup>: Թվային կամ էլեկտրոնային էկո-

<sup>1</sup> Den Reymmer, 5 Стратегий построения Бизнес Экосистем, <http://denreymmer.com/tag/digital-business>

համարզը ինչպես և կենսոլորտի էկոհամակարգը բաժանվում է տարբեր տիպերի, որոնք մեկնաբանությունը ներկայացված է ստորև:

ՀՀ կառավարությունը 2017թ. մայիսի 3-ին հայտարարել է ՀՀ վարչապետի գլխավորությամբ «Թվային զարգացման աջակցող ազգային կառավարման խորհուրդի» ստեղծման մասին<sup>2</sup>, իսկ 2013թ. ՀՀ կառավարությունը հաստատել է “էլեկտրոնային առևտրի զարգացման ծրագիրը”<sup>3</sup>: Հիմք ընդունելով այն, որ էլ-առևտուրը, ըստ էության, կազմում է էլ-բիզնեսի և տնտեսության թվայնացման մասը նորաստեղծ խորհրդի առաջնահերթ խնդիրներից պետք է լինի, ելնելով ՀՀ ազգային առաջնահերթություններից ընդունել ՀՀ-ում էլ-բիզնեսի և տնտեսության թվային զարգացման հայեցակարգը և ծրագիրը: Նպատակահարմար է, որ այն ընդգրկի 2018-2035թթ. ժամանակահատվածը: Ծրագիրը պետք է ներկայացնի էլ-բիզնեսի զարգացման և տնտեսության թվայնացման գործում պետության, էլ-բիզնեսում ակտիվ ներգրավված բիզնես հանրության, ՏՀՏ ոլորտի, համայնքային մարմինների և քաղաքացիական հասարակության միասնական համաձայնեցված քաղաքականության հիմնական ուղղությունները (այսուհետև տեքստում Ծրագիր): Այսպիսով, հարկ ենք համարում շեշտել, որ էլ-բիզնեսի և տնտեսության թվայնացման զարգացման հիմնախնդիրը չի կարող լինել բացառապես կառավարության կամ բիզնես հանրության “մենաշնորհը”: Ծրագրի կենսունակությունը պայմանավորված է բոլոր շահառուների ակտիվության աստիճանով, որը և կապահովի բազմապատկող կամ սիներգիկ արդյունք, որը բնորոշ է թվային էկոհամակարգին ընդհանրապես: Սույն հետազոտության նպատակն ու խնդիրը չէ ամբողջական ծրագրի նախագծի մշակումը, ստորև ներկայացվում է Ծրագրի կառավարման ու կարգավորման առանցքային դրույթներն ու դրանց կարևոր բաղադրիչների մեկնաբանությունը:

Հարկ ենք համարում շեշտել, որ էլ-բիզնեսի և տնտեսության թվային զարգացման գրավականը թվային տեխնոլոգիաների հետ մեկտեղ հանդիսանում է այդ տեխնոլոգիաների և տվյալների կառավարման մոդելների կիրառումը: Այդ առումով շեշտադրումները միտված են կառավարման և կարգավորման մոտեցումների և կոնկրետ կառուցակարգերի մշակման, յուրացման և արդյունավետ կիրարկմանը:

<sup>2</sup> ՀՀ կառավարության կայք, Վարչապետի մոտ քննարկվել են Հայաստանի թվային զարգացման ռազմավարության հեռանկարները, 3 Մայիս 2017, <http://www.gov.am/am/news/item/12961/>

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին, Քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, 19 սեպտեմբերի 2013 թվականի N 37, <http://www.arlis.am/>

Ծրագրի նպատակն ու խնդիրները: ՀՀ էլեկտրոնային բիզնեսի և տնտեսության թվային զարգացման նպատակն է՝ պետական կառավարման մարմինների, գործարար համայնքի և ՏՀՏ ոլորտի մասնակցիների, համայնքային մարմինների, քաղաքացիական հասարակության համատեղ ուժերով և աջակցությամբ բարենպաստ ինստիտուցիոնալ և կարգավորման միջավայր ձևավորել թվային տնտեսության զարգացման համար, որը կնպաստի.

1. Ազգային տնտեսության որակական և կառուցվածքային փոփոխություններին, նպատակաուղղված՝ նոր որակով բիզնեսի զարգացմանն ու զբաղվածության ապահովմանը, աշխատաշուկայի փոփոխվող պահանջարկի համարժեք արձագանքմանը:

2. Բիզնեսի և տնտեսության կառավարման համակարգի արդյունավետության և ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը:

3. Երկրի սահմանափակ տարողությամբ ներքին շուկայի ընդլայնմանն ու արտահաման կարողությունների ավելացմանը, ի հաշիվ՝ եղած շուկաների խոր ներթափանցման և նոր շուկաների ձևավորման և դրանց գործունեության նոր պայմանների և մոտեցումների գործարկման:

4. Զարգացող գլոբալ համաշխարհային մեգաթվային էկոհամակարգում ՀՀ-ի հաստատուն տեղի ամրագրմանը:

Ծրագրի շրջանակներում էլ-բիզնեսի զարգացման *առաջնահերթ խնդիրներից* պետք է դիտվեն.

✓ Տնտեսության թվային վերափոխման ապահովումը ի հաշիվ.

ա) *Տարբեր մակարդակներում տնտեսական կառավարման էտալոնային մոդելի փոփոխության*: Առկա կառավարման մոդելի էտալոն է դիտվում ծրագրային նպատակային պլանավորման մոդելը, այլ խնդիր է ինչ չափով ու արդյունավետությամբ է դա կիրառվում: Թվային դարաշրջանին համահունչ որպես էտալոնային ուղենիշ պետք է դիտարկել՝ ծրագրային կանխատեսող մոդելը (որի կիրարկման երաշխիքներից մեկը մեծ տվյալների վերլուծության արդյունքերի կիրառումն է), ամենևին չսահմանափակելով առաջին մոդելի կիրառումը:

բ) *Կառավարման որոշումների կայացման համար համապարփակ վերլուծության*, ներառյալ մեծ տվյալների վերլուծության գործիքակազմի հնարավորությունները:

գ) Արտադրության և ծառայությունների գործընթացում *ավելացված արժեքի շղթայի հարմարեցումը* թվային տեխնոլոգիաների օրինաչափություններին: Ընդհանուր առմամբ բիզնեսի թվայնացված տեխնոլոգիաները ներգործում են 5 առանցքային բաղադրիչների վրա, որոնց հիման վրա ձևավորվում է բիզնես ռազմավարությունը, դրանք են՝ հաճախորդները, մրր-

ցակիցները, տվյալների բազան, նորարարությունները և արժեքները<sup>4</sup>: Բիզնես ընկերության համար կարևոր է հասականալ ինչն է արժեքավոր հաճախորդի համար ժամանակի յուրաքանչյուր պահին, ինչն է ընկերության ստեղծած արժեքում արժեքավոր իր համար: Դրա հաշվի չառնելը կամ անտեսելը բերում է նրան, որ թվային էկոհամակարգում հաճախորդի կողմից մի ընկերությունից մյուսին անցումը կատարվում է վարկյանների ընթացքում՝ ստեղծաշարին մատի մեկ հայումով: Հետևապես թվայնացված բիզնեսի առաջնահերթ խնդիրներից է հաճախորդների վարքագծի ուսումնասիրությունը: Խնդիրը նրանում է, որ հաճախորդը ընկերությանը դիտարկում է մեկ ամբողջություն, ուստի մարքեթինգը, վաճառքը սպասարկող ծառայությունները և հաճախորդի համար տեսանելի բոլոր տարրերը պետք է հիմնվեն միևնույն տեխնոլոգիական լուծումների վրա, որը թույլ կտա կառավարումը իրականացնել հաշվի առնելով հաճախորդների փորձն ու վարքագիծը և մշտապես կատարելագործել գործունեությունը:

✓ *Էլ-բիզնեսի մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը:* Դա պահանջում կրթական ծրագրերի արդիականացում, երկակի տեսագործնական ուսուցում, բիզնեսում ընդգրկված մասնագետների ներգրավմամբ, վերապատրաստումների ու անընդմեջ ուսուցման ձկուն համակարգ, որը հնարավորություն կտա ապահովել շուկայի պահանջարկը որակյալ մասնագետների նկատմամբ: Կրթական նախաձեռնությունները հարկ է զուգորդել խորհրդատվական և տեղում վերապատրաստման միջոցառումների գործուն նախաձեռնություններով, ուղղված՝ բիզնես կառավարման հմտությունների բարելավմանը, հատկապես՝ ՓՄՁ-ների կողմից էլ-առևտրի և էլ-վճարային համակարգերից օգտվելու կարողությունների և հմտությունների բարձրացմանը: Դրանք ՀՀ-ում նպատակահարմար է իրականացվել նաև օրենքով նախատեսված ՓՄՁ-երի աջակցության համար սահմանվող ամենամյա ծրագրի շրջանակում:

✓ Ձևավորվող համաշխարհային թվային էկոտարածությունում ՀՀ համարժեք մրցունակության ապահովումը:

✓ Համաշխարհային թվային էկոտարածությունում անհատների, բիզնեսի, երկրի կառավարման համակարգի և իշխանության տարբեր օղակների, համայնքների կիբերանվտանգության ապահովումը, ներառյալ անձնական տվյալների և անձի անձեռնամխելիության ապահովումը:

✓ Արտադրական, առևտրի և ծառայությունների ոլորտներում թվային տեխնոլոգիաների զարգացման համար երկրում համարժեք հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման խթանումը, որը կապահովի համատարած և մատչելի միացումը համացանցի բարձ-

<sup>4</sup> Den Reymer, 5 Стратегий построения Бизнес Экосистем, <http://denreymer.com/tag/digital-business>

րարագ լայնաշերտ կապին: Եթնակառուցվածքների պահանջներից է 5G բարձր արագության տվյալների 100 Գբայտ/վ և 1-10 մվ ուշացումով հեռահաղորդակցության արագության կապի համատարած ներդրումը, ինչպես նաև “GPS”, “Galileo”, “COMPASS”, “ГЛОНАСС” արբանյակային կապի տեսակների հետ ինտեգրացված շարժական կապի ապահովումը:

✓ Ծրագրի իրականացման ընթացքում թվային միջավայրի նկատմամբ գործարար համայնքի, այդ թվում՝ ՓՄՁ-ների, գնորդների և սպառողների համար վստահելիության պայմանների ստեղծումը, հիմնվելով չարգելափակող կանխարգելիչ կարգավորումների վրա:

✓ Ծրագիր իրականացման համապատասխան վերահսկողության և մոնիթորինգի համար համարժեք չափորոշիչների մշակումն ու կիրառումը:

*Թվային վերափոխման հիմնական ուղղությունները:* Տնտեսության թվային էկոհամակարգի տրանսֆորմացիան պահանջում է սևեռվել.

✓ Թվային բիզնեսի էկոհամակարգի բաղադրիչների վրա, որոնք փորձագետները ստորադասում են 5 բաղադրիչների<sup>5</sup>, դրանք են.

1) *Թվայնացված էլ-բիզնեսի հարթակների էկոհամակարգը:* Դրանց մեջ են առևտրային և պետական հարթակները, այդ թվում միջազգային առևտրային հարթակները: Թվային հարթակներին միացողները խրախուսվում են տարբեր կերպ՝ սուբսիդավորում, խորհրդատվություն և այլն:

2) *Ինովացիաների էկոհամակարգը*, որի նպատակն է՝ նոր ապրանքների ու ծառայությունների մշակման արագացումը, մասնավորապես՝ հետազոտությունների, փորձարկումների, ներդրման, շուկա դուրս բերելու ժամանակի և ծախսերի կրճատումը, և հաջողված օրինակների արագ մասշտաբացումը: Այդ առումով հարկ է սևեռվել բաց ինովացիաների տիպի վրա. արժեքավոր գաղափարները կարող են գալ ընկերության ներսից կամ դրսից և մղվել շուկա: Բաց ինովացիաների իրագործման համար կարևոր են ինովացիոն բորսաները և քրաուդսորսինգի (crowdsourcing) ինստիտուտը, երբ տարբեր խնդիրների լուծման համար կամավորական հիմունքներով, իսկ որոշ դեպքերում հատուցելի հիմքվ օգտագործվում է S<S ներգրավված լայն շրջանակի ներուժը՝ ստեղծագործական կարողությունները, գիտելիքներն ու փորձը<sup>6</sup>: Նման հարթակներ են “Topcoder”-ը, “Kaggle”-ը, որտեղ մշակողները մրցում են լավագույն լուծումների համար, ինովացիաների համատեղ մշակումը՝ “Boeing”-ի (Dreamliner), “Samsung”-ի կողմից:

3) *Սոցիումների ընդհանրական շահերի էկոհամակարգը*, որի ձևավորման գործում գերակա դիրք են զբաղում սոցիալական մեդիա տեղեկատվական ցանցերը: Ընդհանրական շահի էկոհամակարգի առաջացմանը նպաստել է սոցիալական ցանցերի ու շարժական ինտերնետի զարգացումը: Ձևա-

<sup>5</sup> Նույն տեղը:

<sup>6</sup> Crowdsourcing, <https://en.oxforddictionaries.com/definition/crowdsourcing>

վորվել են ընդհանրական շահերով համախմբված բազմաթիվ սոցիումներ, որոնք ունեն տասնյակ և հազարավոր, իսկ երբեմն միլիոնավոր անդամներ: Բիզնեսը կառուցում է իր աշխատանքները նման էկոհամակարգերի հետ առաջին հերթին իր ապրանքների և ծառայությունների իրացման նպատակով: Միևնույն ժամանակ դրանք հետադարձ կապով ծառայում են որպես ինովացիոն գաղափարների աղբյուր:

4) *Էլ-առևտրի կամ կոմերցիայի էկոհամակարգի զարգացումը*: Առաջնահերթ պահանջներից է իրավական կարգավորման կատարելագործումը, կիրքեր անվտանգության ապահովումը, բանկային, այդ թվում՝ վճարային ծառայությունների հասանելի և մատչելի հնարավորությունը, ապրանքների ֆիզիկական առաքման հուսալի համակարգը, տրանսպորտային լոգիստիկան, խորհրդատվական ծառայությունները, հետառաքումային սպասարկումը:

ՀՀ-ում էլ-առևտրի ընդլայնման խնդիրներից է հանրության կողմից դրան կատամամբ անհրաժեշտ վստահության ձևավորումը, որին պետք է նպաստի ինքը բիզնեսը, պետական քաղաքականությունը և քաղաքացիական հասարակությունը: Էլ-առևտրի կիրառումը խթանող պետական աջակցության հնարավորություններից են, մասնավորապես՝ ՓՄՁ-ների համար խորհրդատվությունների, կրթական և վերապատրաստման ծրագրերի կազմակերպումը, ծառայություններ մատուցողների սակագների սուբսիդավորումը:

5) «Բանացանցի» (Internet of Things» IoT) էկոհամակարգի ակտիվ կիրառումը: Այն իրենից ներկայացնում է համացանցին միացված ինժեներական ֆիզիկական սարքերի կամ միավորների համախումբ (արտադրական նշանակության ցուցիչները, արտաքին վերահսկողության տեսախցիկներ և այլն): Դրանք ավտոմատացնում և չեզոքացնում են մարդկային գործոնը տարաբնույթ գործընթացներում և ապահովում են աննախադեպ ծավալի տեղեկատվություն:

Թվային տնտեսության անցումը ապահովող տեխնոլոգիական ուղությունների առումով Ծրագրի շրջանակներում հարկ է կենտրոնանալ. ա) տվյալների մշակման, հատկապես մեծ տվյալների մշակման ոլորտի վրա, բ) “ամպային” տեխնոլոգիաների վրա: Դրանք ապահովում են մեծ տվյալների պահեստավորումը վստահելի թվային տարածքում, ցանցի ծայրամասային սարքերի վրա (անհատական համակարգիչներ, շարժական սարքեր) դրանց մշակումը և օգտագործումը և ցանցային համագործակցությունը, գ) գերիզոր համակարգիչների գործարկման վրա, դ) տվյալների հավաքագրման և ավտոմատ նույնականացման տեխնոլոգիաների վրա (Automatic Identification and Data Capture, AIDC), ե) տեղեկատվության մշակման առանցքը հատող տեխնոլոգիաների վրա (Straight-through Processing, STP): Այն իրենից ներկայացնում է մշակման մասնագիտացված ծրագրերի ամբողջություն, որը հնարավորություն է տալիս իրականացնել տվյալների ինտերակտիվ փոխա-

նակում, որն իրականացվում է անընդատ և ավտոմատ մշակումով, առանց մարդկային միջամտության, գ) բլոկչեյն տեխնոլոգիաների վրա (Blockchain technology), որոնք իրենցից ներկայացնում են բազմաֆունկցիոնալ և բազմամակարդակ տեղեկատվական տեխնոլոգիաներ, նախատեսված տարբերակտիվների հուսալի հաշվառման համար, է) նեյրոնային համակարգային ինտերֆեյս տեխնոլոգիաների կամ մարդու գլխուղեղ համակարգիչ կապող տեխնոլոգիայի վրա:

*Թվային տնտեսության անցումը ապահովելու առումով Ծրագրի շրջանակներում հարկ է կենտրոնանալ էլ-առևտրի կառավարման հետևյալ ուղղությունների յուրացման ու մասշտաբացման վրա. ա) բիզնես – բիզնես (B2B), բ) բիզնես – հաճախորդ (B2C), գ) հաճախորդ - հաճախորդ (C2C), դ) հաճախորդ - բիզնես (C2B), ե) բիզնես - կառավարություն (B2G), ե) կառավարություն - բիզնես (G2B):*

Էլ-առևտրի և էլ-բիզնեսի զարգացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում ՀՀ արտաքին առևտրի էական ընդլայնման համար, որն իր հերթին դրական գործոն կհանդիսանա գործարար միջավայրի, այդ թվում մրցակցային միջավայրի բարելավման և տեղական արտադրության զարգացման համար: Դրա համար անհրաժեշտ է նախևառաջ նպաստել էլ-առևտրի տեխնոլոգիաների զարգացմանը, հատկապես բիզնես-բիզնես B2B, բիզնես-հաճախորդ B2C սխեմաների, որը մեծապես կբարձրացնի տնտեսավարողների արտահանման հնարավորությունները: Պետության խնդիրը այս դեպքում կազմակերպչական, տեխնիկական, տնտեսական և այլ միջոցառումների իրականացումն է ուղղված արտահանողների կողմից B2B և B2C սխեմաների կիրառության ընդլայնմանը, այդ թվում՝ էլեկտրոնային արտահանման ու ներմուծման մաքսային և հարկային ընթացակարգերի կատարելագործմանը (դրա համար պահանջվող մաքսային ընթացակարգերը ներկայումս առկա են): Էլ-առևտրի գործուն կայացման համար կարևոր բաղադրիչներից է առևտրի ապրանքների ֆիզիկական արագ առաքումը, ծառայությունների մատուցումը ու հետառաքումային սպասարկումը, որի համար խիստ կարևոր խնդիրներից է տրանսպորտային լոգիստիկայի թվային վերափոխումը: Բիզնես-բիզնես B2B մոդելում հեռանկարային է դիտվում բանացանցի տեխնոլոգիաների կիրարկումը, որը պատվիրատուին հնարավորություն տալիս ինքնուրույն հետևել առաջարկի վերաբերյալ իր համար ակտուալ տեղեկատվությանը, մասնավորապես՝ արտադարական ցիկլերի ընթացքին՝ նյութերի, հումքի պատվիրում, մատակարարում, պատրաստի արտադրանքի առաքում սպառողին, ներառյալ առաքման, փոխադրման ժամանակը, ապրանքի ստացման ժամկետը և այլն: Դա հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել գնումներն ու այդ թվում դրանց

տրանսպորտային լոգիստիկան: Էլ-առևտրի արդյունավետության մյուս բաղադրիչը ֆինանսական ծառայություններն են՝ վճարումները, դրամական փոխանցումները, ակտիվների կառավարումը, քրաուդֆանդինգը, առցանց բանկային ծառայությունների մատուցումը: Ծրագրի գերակայություններին համահունչ հասնելու համար անհրաժեշտ է կատարելագործել *թվային տրնտեսության իրավական հիմքերը, դրա հիմնական ինստիտուտների գործունեության կարգավորումը*, մասնավորապես՝ ամրապնդել և կատարելագործել թվային տնտեսության օրենսդրական կարգավորումը, որոնք վերաբերվում են էլեկտրոնային գործարքի սուբեկտին, նրա պատասխանատվությանը, էլ-գործարքի օբյեկտին, էլ-փաստաթղթերին, էլ-փաստաթղթաշրջանառությանը, թվային միջավայրում իրավախախտումներին, էլեկտրոնային միջավայրում առանձնահատուկ իրավական գործելակարգերի կիրառմանը, բանաճանցի տեխնիկական սարքերից ավտոմատ հավաքագրվող թվային տվյալների կարգավիճակին: Ընդհանուր առմամբ, ոլորտի կարգավորումը պետք է լինի կանխարգելիչ և չարգելափակող, որպեսզի չզսպի նորագույն տեխնոլոգիական լուծումների և կառավարման մոդելների յուրացումը և չհանգեցնի երկրի հետ մնալուն միջազգային զարգացումներից:

*Ծրագրի տեղեկատվական և տնտեսական անվտանգության ապահովման բաղադրիչները:* Էլ-առևտրի և էլ-բիզնեսի զարգացումը ուղորդվում է տեղեկատվական ռիսկերի սպառնալիքներով, որը խնդիրներ է առաջացնում պետական մարմինների և բիզնես տնտեսվարողների և առանձին անհատների համար: Կիրբեր անվտանգության ռիսկերը հատկապես խոցելի են անձնական, առևտրային տվյալների պահպանման առումով, ֆինանսավարկային համակարգում, տեղեկատվական համակարգի ենթակառուցվածքներում:

Տեղեկատվական և տնտեսական անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից է անվտանգ էլ-վճարային համակարգերի ստեղծումը և դրանց պահպանումը: Անվտանգությունը հանդիսանում է էլ-վճարային համակարգերի ներդրման և մասշտաբացման կարևոր բաղադրիչը: Դրա անվտանգ շահագործումը ներառում է մի շարք կառուցակարգերի, այդ թվում՝ օրենսդրական, իրավական և համակարգչային ծրագրերի համալիր կիրառման ապահովում՝ ուղղված տեղեկատվության աղբյուրի նույնականացմանը և ամբողջականության երաշխավորմանը, տեղեկատվության (տվյալների) գաղտնիության ապահովմանը: Խնդիրը կայանում է նրանում, որ այն ընկերությունները, որոնք ներդրել են էլ-բիզնես ձևաչափը կարծում են, որ իրենց անվտանգության ընթացակարգերը բավարար են պաշտպանելու իրենց էլ-բիզնեսը: Մինչդեռ ըստ փորձագետների անցումային շատ երկրների համար առցանց վճարման անվտանգության հարցերը լուրջ խնդիրներ են առա-



ջացնում<sup>7</sup>: Հիմնախնդիրը գտնվում է նաև միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում, այսպես ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (UNCTAD) առաջարկում է էլ-վճարումների և էլ-առևտրի ներդրման խթանման միջոցառումներ, որոնք ուղղված են առցանց վճարումների միջավայրի ամրապնդմանը, վճարման անվտանգության, տվյալների կոդավորման և գաղտնիության քաղաքականությանը: Այն միտված է տեղական կարիքներին ու հնարավորություններին առավել հարմարեցված էլ-առևտրի հարթակների ձևավորելու խրախուսմանը, ներառյալ ՕՈՒՆ խրախուսմանը<sup>8</sup>: Տեղեկատվական անվտանգության ապահովման առումով անհրաժեշտ է սևեռվել հետևյալ հիմնական ուղղությունների և բաղադրիչների վրա, դրանք են.

- Տեղեկատվական առանցքային ենթակառուցվածքների անվտանգության, դրա ամբողջականության և հուսալիության ապահովումը:

- Տեղեկատվության անվտանգության նպատակով ծածկագրության կամ կոդավորման տեխնոլոգիաների զարգացումը, որը ապահովում է տեղեկատվության գաղտնիությունը, իսկությունը և ամբողջականությունը ստուգելու հնարավորությունը:

- Թվային ստորագրությունների՝ նույնականացման ապահովումը, ամբողջականության պաշտպանությունը և անընդատությունը: Օրենսդրական կարգավորման առումով ՀՀ-ում դրանք տրվել է համարժեք լուծում:

- Բիզնեսի և սպառողների կիբեր անվտանգության տեղեկացվության մակարդակի բարձրացումը, որը պետք է լինի ոչ թե սպոնտան, այլ իրականացվի ինստիտուցիոնալ և համակարգված ձևաչափով:

- Կիբեր իրավախատումների կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը, ինչը պահանջում է անդրադարձ կատարել նաև էլ-վճարումների կառուցակարգերի կարգավորումներին և իրավական մարտահրավերներին և ստեղծել իրավական բարենպաստ միջավայր:

*Տնտեսության թվայնացման Ծրագրի իրականացման հետ կապված միջազգային համագործակցության խնդիրները:* Հարկ է նկատել, որ համացանցի էլեկտրոնային տեղեկատվական տարածությունում ներկայումս բացակայում են միջպետական հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական նորմերն ու մեխանիզմները, որը դժվարեցնում է այդ ոլորտում կայունության և անվտանգության ապահովումը: Միջազգային համագործակցության կարևոր խնդիրներից է զլոբալ թվային տարածքում առանձին երկրների և միությունների կազմում (Եվրամիության, Եվրասիական մի-

<sup>7</sup> Anwar Ali Shah G. Syed, Faiz. M. Shaikh, Barriers in Implementation of E-Business Technologies in Small and Medium Enterprises (SMEs) in Pakistan

[http://www.revistadestatistica.ro/wp-content/uploads/2014/02/RRS\\_4\\_2012\\_A5\\_en.pdf](http://www.revistadestatistica.ro/wp-content/uploads/2014/02/RRS_4_2012_A5_en.pdf)

<sup>8</sup> Information Economy Report 2015: Unlocking the potential of e-commerce for developing countries, UNCTAD (2015) [http://unctad.org/en/PublicationsLibrary/ier2015\\_en.pdf](http://unctad.org/en/PublicationsLibrary/ier2015_en.pdf)

ության, ԱՊՀ-ի) թվային իրավասության սահմանների և շրջանակների սահմանազատումը: Ելնելով վերը նշվածից թվային տնտեսության էկոհամակարգի զարգացման խնդիրները համարժեք արտացոլում պետք է ունենան ՀՀ արտաքին տնտեսական համագործակցության ոլորտի միջպետական պայմանագրերում: ՀՀ պետք է ներկայացված լինի թվային տնտեսության զարգացումները և կիբեր անվատնգությունը խնդիրները կանոնակարգող միջազգային կազմակերպություններում:

Մյուս խնդիրը բիզնեսի և մասնավորապես ՓՄՁ-ների համար միջազգային կառույցների կողմից տրամադրվող աջակցության հասանելիության ապահովումն է, որը կմեղմի հատկապես ՓՄՁ-ների կողմից ՏՀՏ ներդրման համար պահանջված անբավարար գիտելիքներն ու հմտությունները: Այդ առումով հարկ է նշել, որ ՓՄՁ-րի համաշխարհային համաժողովը (World SME Forum) կողմից իրականացվում է “Թվայնացված առևտուր և էլեկտրոնային հարթակ” նախաձեռնությունը<sup>9</sup> (Digital Trade & ePlatforms), նպատակ ունենալով աջակցելու ՓՄՁ-ներին ձեռքբերել թվային տնտեսության հնարավորություններն ու օգուտները: Համալիր միջոցառումների շարքում է նաև ՓՄՁ-ների հասցեական գլոբալ առցանց հարթակի ստեղծումը, որը կիրականացվի ՓՄՁ-ների մեկ խանութ պատուհանի (one-stop-shop for SMEs) միջոցով, նպատակաուղղված՝ (ա) բարձացնելու ՓՄՁ-ների ֆինանսների հասանելիությունը, (բ) դյուրինացնելու նրանց մուտքը պահանջվող գիտելիքներին, հմտություններին, վերապատրաստումներին, նորարարություններին, փորձին ու տեղեկատվությանը, (գ) բարձրացնելու ՓՄՁ-ների գործընկերային հնարավորությունները արժեքի գլոբալ շղթայում (Global Value Chains): Դրա հետ կապված ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունները իրենց լիազորությունների շրջանակում պետք է քայլեր նախաձեռնեն այդ հարթակի և միջազգային այլ ֆորումների կողմից ընձեռած հնարավորություններից օգտվելու համար:

*Ծրագրի նպատակային ցուցանիշներն ու դրանց մոնիթորինգը:* Ծրագրի կատարողականի ապահովման և մոնիթորինգի առումով կարևոր ցուցիչներ պետք է դիտվեն. ա) էլ-առևտրի ծավալները, այդ թվում՝ երկրի ներսում և միջազգային շուկաներում, բ) բիզնեսի կորպորատիվ մակարդակով էլ-առևտրի և էլ-բիզնեսի ոլորտում զբաղվածների թվաքանակը, գ) առցանց բիզնեսում ընգրկված հաճախորդների թվաքանակը և դրա դինամիկան ըստ ոլորտների, դ) առցանց առևտրի ֆիզիկական և գումարային ծավալները և դրա դինամիկան ըստ ոլորտների, ե) էլ-առևտրի և էլ-բիզնեսի զրագացման համար իրականացված ներդրումները՝ պետական և կորպորատիվ մակար-

<sup>9</sup> Digital Trade & ePlatforms, World SME Forum <http://www.worldsmeforum.org>

դակներով, ըստ ոլորտների և դրանց դինամիկան, գ) առևտրային գործարքների ժամանակի տևողությունը և դրա դինամիկան, է) հաճախորդների կոնվերսիայի (հաճախորդից գնորդ տրանսֆորմացիայի) վիճակագրությունը:

✓ Սույն Ծրագիրը պետք է *պարունակի թվայնացման ենթաժրագրեր* արդյունաբերության, շինարարության, էներգետիկայի, գյուղատնտեսության, ֆինանսական, տրանսպորտային լոգիստիկայի, առողջապահության, կրթության, կոմունալ տնտեսության, գազի ջրի մատակարարման ծառայությունների ու սպասարկումների, և ծառայության այլ ոլորտների համար:

✓ *Պետություն մասնավոր հատված համագործակցության ձևաչափով էլ-բիզնեսի աշխատանքային հարթակի ձևավորումը*: Էլեկտրոնային բիզնես միջավայրի ձևավորումն ու մասշտաբացումը և Ծրագրի իրագործումը՝ մոնիթորինգը, առաջնահերթությունների ժամկետային վերանայումը և այլ ճշգրտումներ պահանջում են Ծրագրի շրջանակներում մշտապես իրականացնել բիզնես մասնակիցների, պետության և քաղաքացիական հասարակության ռազմավարական նախաձեռնությունների և մոնիթորինգի ամրագրում, որը նպատակահարմար է հավաքել մեկ միասնական վիրտուալ «ՀՀ թվային բիզնեսի նախաձեռնություններ» հարթակում, նպատակաուղղված՝

ա) Ոլորտում ծագող հիմանխնդիրների բարձրաձայնմանն ու տարբեր ձևաչափերով դրանց լուծումների, մասնավորապես՝ թվային ենթակառուցվածքների բավարարության մակարդակը, այդ թվում տեխնիկական, հեռահաղորդակցության, իրավական, կադրային, ֆինանսական, ՏՀՏ և այլ:

բ) ԱՎԾ-ի հետ համագործակցությամբ էլ-բիզնեսի և թվային տնտեսության պատկերը արտացոլող վիճակագրական տվյալների ձևավորում, որը թույլ կտա հասանելի դարձնել տվյալները բոլոր շահառուներին:

գ) “Win-win” գերակայության ամրագրումը՝ մի կողմի ձեռքբերումը մյուսի համար չպետք է հանդիսանա կորուստ, քանի որ շահում են մասնակից բոլոր կողմերը, փոխվում է հաջողության չափման կորոզինատները:

դ) Երկրի շահագրգիռ բոլոր ինստիտուցիոնալ կառույցների գործուն մասնակցությանը գլոբալ էկոհամակարգի զարգացումներին:

Առաջարկվող «ՀՀ թվային բիզնեսի նախաձեռնություններ» հարթակը բնականաբար չի կարող անմիջապես տալ թվային բիզնեսի զարգացման ընթացքում ծագող բոլոր հարցերի բավարար պատասխաններ, բայց դրանք կուղղորդի խորն ուսումնասիրությունների, այդպիսով կհամակարգվեն ոլորտի կողմից պահանջված քայլերը: Ամենակարևորը՝ ծրագրի իրականացման մատրիցը “փոշոտվող փաստաթղթից” կվերածվի “շնչող” ձևաչափի:

**Արման ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

**ՀՀ-ում էլեկտրոնային բիզնեսի զարգացման և տնտեսության թվայնացնելու հայեցակարգը և դրա ակտիվացման առանցքները**

*Բանալի բառեր. էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային բիզնես, բիզնեսի թվայնացման ռազմավարություն, բիզնեսի թվայնացման չափորոշիչներ*

Հոդվածում ներկայացված է էլեկտրոնային բիզնեսի զարգացման և տնտեսության թվայնացման համար անհրաժեշտ ծրագրի առանցքային դրույթները: Շեշտվում է, որ էլ-բիզնեսի և տնտեսության թվայնացման զարգացման հիմնախնդիրը չի կարող լինել բացառապես կառավարության կամ բիզնես հանրության մենաշնորհը: Ծրագրի կենսունակությունը պայմանավորված է բոլոր շահառուների ակտիվության աստիճանով, որը և կապահովի բազմապատկող կամ սիներգիկ արդյունք: Շեշտվում է, որ տնտեսության թվային զարգացման գրավականը հանդիսանում է այդ տեխնոլագիաների և տվյալների կառավարման մոդելների կիրառումը:

**Арман НАВАСАРДЯН**

**Концепция развития электронного бизнеса и цифровой экономики и стержни ее активации в РА**

*Ключевые слова:* электронная коммерция, электронный бизнес, стратегия цифрового бизнеса, критерии цифрового бизнеса.

В статье представлены ключевые положения необходимые по разработке программы электронного бизнеса и цифровой экономики. Подчеркивается, что проблема электронного бизнеса и цифровой экономики не могут быть исключительной монополией государства или бизнес-сообщества. Жизнеспособность проекта будет обусловлена уровнем активности всех заинтересованных сторон, что обеспечит синергический эффект. Указывается, что наряду с цифровыми технологиями залогом успеха программы являются соответствующие ей модели управления. Представлены проблемы международного сотрудничества при реализации программы, вопросы мониторинга и формат необходимых корректировок программы.

**Arman NAVASARDYAN**

**The concept of e-business development, digital economy and its activation in RA**

*Key words:* e-commerce, e-business, digital business implementation strategy, digital business criteria's

The article presents key provisions necessary for the development project for e-business and digital economy. It is emphasized that the issue of e-business and digital economy can not be an exclusive monopoly of the state or the business community. It indicated that viability of the project will be determined by the level of activity of all stakeholders, that provide a synergy effect. It is pointed out that along with digital technologies, the key issue for the success of the program is awareness consequent management models.